ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2023 թվականի N 544 -Ա

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՆ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ, ՏԱԹԵՎ, ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՌԵԼԱՓԱՅՏ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ, ՀԱՏԱՏԵՂԻՑ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետի 28.12.2023թ. զեկուցագիրը և կից ներկայացված ցանկը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Լեռնային Ղարաբաղից 2023 թվականի սեպտեմբեր ամսին տեղահանված և Սյունիքի մարզի Տեղ, Տաթև, Կապան համայնքներում բնակություն հաստատած ընտանիքների համար վառելափայտ ձեռք բերելու, հատատեղից դուրս բերելու և տեղափոխելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 2200-Ն որոշման 01 բաժնի 08 խմբի 01 դասի 08՝ «Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձանց համար առաջնային անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների ծախսերի համար» ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից հատկացնել 10 506 000 (տասը միլիոն հինգ հարյուր վեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ գումարի վճարումը Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ Էդիկ Բունիաթյանի հաշվեհամարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնելու նպատակով:

3. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ Էդիկ

Բունիաթյանին՝ վերը նշված գործառույթներն իրականացնելուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ

2023թ. դեկտեմբերի 28
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290